

Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Իվ. Իվ. Սվէդէնցով.—Վոմպրոմիսներ չը ճանաչող հասարակական գործիչ.—Իվանովիչի կարծիքը պետական օգտի մասին.—Նրա հակապատկերը Վովկասում.—Անհեռատես ազգայնական պաշար.—Փաղաքային ինքնավարութիւնների կաղմը.—Ազգային և ազգականական ձգտում.—Ազգային տենդենցիան քաղաքային գործերում անհեթեթութիւն է.—Իսկական և շինծու կուսակցութիւններ.—Փաղաքային ինքնավարութեան գործունէութեան շրջանակը.—Մեր բոլոր քաղ. ինքնավ. ընդհանուր տենչը.—Բուրժուազիայի ընդհանուր բնատրութիւնը.—Ունեւոր և չքաւոր դասակարգերի շահերը.—Զայնատութիւն՝ մի թէ՛ երեք ժողովներում.—Գործունէութեան որոշ ծրագիրներ և իսկական կուսակցութիւններ.—Չքաւոր դասակարգերին ևս կուտորական բարիքներ են հարկաւոր.—Զուրաւովի ժառանգների նուէրը ժողովրդական ծան համար.—Միլիոնների նպատակալարմար գործածութիւն.—Բարձրագոյն չրովարտակ.—Ժող. լուսաւորութեան նոր մինիստրի հրամանը.—Վառաւարչական հաղորդագրութիւն բարձրագոյն դպրոցների մասին:

Թիֆլիսում մարտի 14-ին վախճանուած ուսն հրապարակախոս-բեղբորիստ Իվան Իվանովիչ Սվէդէնցովը իր ուղղամբ-տութեամբ և հասարակական վեհ իդէալներով մի հազուագիւտ անձնաւորութիւն էր մեր նիւթապաշտ դարում: Իվանովիչը (այդ անունով էր նա աւելի յայտնի) ընդունակ չէր իր խղճի հետ որ և է կոմպրոմիսի մէջ մտնելու. փարիսեցութիւնը, սուտը, անարդարութիւնը և բռնութիւնը նրա անձնաւորութեան մէջ գտել էին մի անվեհեր և անհաշտ թշնամի, որ բորբոքւում էր և իր սրտի բոլոր կարողութեամբ գինւում հասարակական բարօրութիւնը վտանգող ամեն մի գործունէութեան դէմ: Նա «խոհեմութիւն» չունէր ժամանակին լռել, իշխանաւորներին խնայել, եօլա-տանել ու համակերպուել, ինչպէս անում են նը-րանք, որոնք ուզում են համ կոմֆօրտ վայելել, համ էլ «հասարակական գործիչ» կոչուել: Եւ չրջապատող խաւարի ու եսա-սիրութեան մէջ նա նմանում էր մի վառ ճրագի, որ պլպլում է աստանդական իր կեանքի ամբողջ ընթացքում, երբէք չուզե-նալով հաշտուել չարիքի հետ, մինչև որ մարում է, թողնելով

իր յետեից բարի յիշատակ: Նա գիտէր, որ կեանքի վայելքների և փարթամութեան հետ մեր պայմաններում կապուած են շատ կամ քիչ կօմպրօմիսներ իշխող անարդարութեան հետ, ուստի դերադասեց զկեանքներով լի կեանք կրել և պահպանել անբիծ մի խիղճ:

Մեր նպատակից դուրս է այստեղ ընտրուել այդ բերեղի նման մաքուր հոգու գրական գործունէութիւնը. մենք ուզում ենք միայն մատնանիչ անել նրա վրայ, իբրև մեր ժամանակներում հաղուագիւտ դառած հասարակական մի տիպի և աւելացնել, որ թշուառ է այն ազգը, որի մէջ Դիօգէնէսի լապտերով պէտք է փնտրել ի վանօվիչի հասարակական բնազդներով օժտուած անհատներ: Սակայն ի պատիւ ողւս ազգի պէտք է ասել, որ նա ամեն մի վելիչկօյի դէմ կարող է և մի ի վանօվիչ դուրս բերել, ահա ռսի ներքին ոյժի գրաւականներից մէկը...

«Պետական օգուտը պետութեան մէջ ապրող ազգաբնակչութեան օգուտն է—առանց ազգութեան և կրօնի խտրութեան. պետութիւնը չը պէտք է ազգաբնակչութեան մի մասի բարօրութիւնը հաստատէ ի հաշիւ միւսի»^{*)},—ասում էր ի վանօվիչը, ապրելով մեր երկրում, ուր բոլորովին այլ տեսակէտներ էր պաշտպանում մի վելիչկօ: Անշուշտ պետութեան բարօրութիւնը լայն հասկացող ամեն մի հպատակ, առանց կրօնի և ազգի խտրութեան, կը համաձայնի, որ ի վանօվիչներն են այն տարրերը, որոնք համերաշխ և խաղաղ կուտուրական կեանքի հիմքերն ամրացնելով նպաստում են երկրի ընդհանուր առաջադիմութեան և ոչ վելիչկօները, որոնք սերմանում են ատելութիւն, կազ ու կոխ հարևան ազգութիւնների մէջ:

Դժբախտաբար հեռատեսութիւնը շատ քիչ մարդկանց է յատուկ և մեծամասնութիւնը մի քանի անգամ յիմարութիւն է անում, սայթաքում է, մինչև որ վերջապէս, դառն փորձերից սթափուած, տեսնում է ճշմարտութիւնը, հասկանում է իր օգուտը: Մի այդպիսի տխմար անհեռատեսութիւն էր և վրացիների ու հայերի կռիւները Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնների առիթով:

Աշխատե՛ք պարզել մեր ասածը:

Պետական բարձր իշխանութիւնը քաղաքային ինքնավարութիւններին որոշ օրէնքով յատկացրել է գործունէութեան յայտնի շրջանակ: Այդ ինքնավարական մարմինը, համաձայն

*) Տե՛ս „Вѣстн. Европ.“ 1900, № 4-ի մէջ ի վանօվիչի „Колонизация Кавказа“ յօդուածը, որի մասին համառօտ տեղեկութիւն կարելի է գտնել և „Մշակի“ № 76-ում:

1892 թուի կանոնադրութեան, ընտրում են միայն նիւթական որոշ ցէնդ ունեցող քաղաքացիները, այսինքն նրանք, որոնք քաղաքում ունեն անշարժ կայք կամ առաջին և երկրորդ կարգի առևտրա-արդիւնագործական ձեռնարկութիւն: Այդ պահանջները շնորհիւ ընտրողներն ու ձայնաւորները լինում են միմիայն քաղաքի ունեւոր դասակարգից: Բնականաբար, օրինակ, Մոսկուայում քաղաքային խորհրդարանի անագին մեծամասնութիւնը պիտի բաղկացած լինի ուսւ ձայնաւորներից, Քուեթայիսում՝ վրացիներից, իսկ Թիֆլիսում էլ, ուր տնատէրերը և առևտրա-արդիւնագործական ձեռնարկութիւնների վարիչները հայեր են, զարմանալի չէ, եթէ քաղաքային ձայնաւորների մեծամասնութիւնը այդ ազգութեան է պատկանում: Սակայն հետաքրքրական է խմանալ, թէ քաղաքային գործերում ինչով է արտայայտուել այդ հայ ձայնաւորների ազգային տենդենցիան, ցանկալի էր՝ լսել թէ ի՞նչ մի առանձին զուտ հայկական գիծ է ցոյց տուել Թիֆլիսի խորհրդարանը, ի՞նչ մի առանձնայատուկութիւն է ունեցել Թիֆլիսի բուրժուական խորհրդարանը, որով նա տարբերուել է Գուեթայիսի, Մոսկուայի կամ մի այլ քաղաքի «գումայից»:

Մեր բոլոր քաղաքների խորհրդարանների կազմը բուրժուազիական է, լինի դա Քուեթայիսում, Մոսկուայում թէ Թիֆլիսում: Չեմ կարծում, որ մի չիտակ վրացի կամ ուսւ համագումար լինի, որ վրացի բուրժուան աւելի ակտրուիստ է, քան հայ կամ ուսւ բուրժուան: Այդ դասակարգը ունի ամենուրեք ընդհանուր սնտեսական շահեր, բարեկեցութեան ընդհանուր մի տենչ, իսկ ազգային տենդենցիա, եթէ ցանկալ անգամ, չէ կարող արտայայտուել մեր քաղաքային գործերում: Ազգականական—բարեկամական կապերը դեռ ևս կարող են որոշ դեր խաղալ այս կամ այն գրաւիչ պաշտօնը սրան կամ նրան տալու դէպքում, բայց ի՞նչ կապ ունի դա ազգային դադախարի հետ: Ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ ազգային տեսակէտից, օրինակ, թէ Ուպրավայի այս կամ այն անդամը եանց է, թէ ձե կամ օվ: Պաշտօնների համար կարող են նոյն իսկ ամենակատաղի իրցութիւններ լինել, ինչպէս, օրինակ, լինում են վերաց ազնուականների բանկային ընտրութիւնների ժամանակ. բայց միթէ այդ ետական ձգտումներին կամ ազգականական բարեկամական համակրութեան ու հակակրութեան հետ կարելի է խառնել ազգայնութեան դադախարը: Պէտք է միամիտ լինել մի այդպիսի շինծու պատրուակին հաւատ ընծայելու համար: Դա մի խաղ է, որ հնարել են Թիֆլիսի ինտելիգենտ-բուրժուաները: Ինչու՞ն է կայանում քաղաքային ինքնավարութեան գոր-

ծունէութիւնը.— Խորհրդարանը կառավարում է քաղաքի կայ-
քերը և դրամադուլիւնները, հոգ է տանում քաղաքի արտաքին
բարեկարգութեան, առողջապահական դրութեան մասին, խնա-
մում է աղքատներին, նախադգուշական միջոցներ է առնում
կրակի և զանազան պատուհասներին դէպքերում, ընդարձակում
է ժողովրդի կրթական միջոցները, միջնորդում է բարձրագոյն
իշխանութեան առաջ տեղային պէտքերի մասին և այլն: Արդ,
գործունէութեան այդ բոլոր ճիւղերում չէ կարելի ցոյց տալ մի
բան, որի մէջ հայկական կամ վրացական տենդենցիա արտա-
յայտուէր: Մեր առաջ դրուած են միմիայն ընդհանուր քաղա-
քային գործեր և առողջ խելքը պէտք է թելադրէր ընտրել քաղա-
քային գործերի համար այնպիսի ղեկավարներ, որոնք եռանդոտ
են, շիտակ և ընդունակ. բնաւ ուշք չը դարձնելով, թէ ընտրուո-
ղը թաթախման երեկոները հայոց եկեղեցին է յաճախում (չէ որ
հայ բուրժուա-ինտելիգենտների մեծամասնութեան «աղգային»
յատկանիչը միայն դրա մէջ է արտայայտուում...):

Միայն անաչառութեան պարպը կատարած կը լինենք
յայտնելով, որ Թիֆլիսի քաղաքային խորհրդարանը ոչ միայն
զուտ հայկական որ և է տենդենցիա չէ ցոյց տուել, այլ և
գործել է հէնց այն ուղղութեամբ, որ բնորոշ է Ռուսաստանի
բոլոր քաղաքային ինքնավարութիւններին: Անշուշտ, նախ և ա-
ռաջ իշխող դասակարգը իր բնոր թեթևացնելու, իր յարմարու-
թիւնները բազմացնելու մասին է մտածում և ապա նաև չքա-
ւոր դասակարգի պահանջներն է ի նկատի առնում: Այդ բա-
նում զուտ հայկական դիժ չը կայ. Քութայիսում նոյնն է, ինչ որ
մի Օրեօլում, Թիֆլիսում նոյնն է, ինչ Պետերբուրգում: Համա-
մարդկային դիժ է, որ կուշտը քաղցածին զփուար է հասկա-
նում, և այդ երևոյթի մէջ ինչ-որ ազգային դաւեր որոնել նշա-
նակում է Դոն-Քիշոտի նման հողմաղացների դէմ կուռել: Եթէ,
օրինակ, վրացին, որի ձեռքումն է մեր երկրի մանդանէզի
արգիւնաբերութիւնը, իր բանտերների համար աւելի իդէալա-
կան կարգեր ստեղծած լինէր, քան հայ նաւթագործը—մենք,
զուցէ, համոզուէինք, որ վրացի բուրժուայի մէջ աւելի է զար-
գացած ստորուխտական գիծը, քան նրա հայ եղբայրակցի. բայց
չէ որ իրականութիւնը մեզ իրաւունք չէ տալիս մի այդպիսի
եզրակացութիւն անելու: Ուստի ժամանակ է արխիւ յանձնել
աղգային անհամբերութեամբ արատաւորուած հին դրօշակները
և պարզել մի նոր դրօշակ, որի վրայ բացայայտ գրուած լինեն
քաղաքային գործերը և փնտեսութիւնը վարելու ծրագիրներ:
Այն ժամանակ այդ ծրագիրների շուրջը կը խմբուեն մարդիկ,
համաձայն իրանց ձգտումներին և աշխարհայեցողութիւններին

և ոչ ազգականական-բարեկամական կապերին... Իսկապէս մենք մինչև այժմ «հայկական» կամ «վրացական» ծրագիրներ էլ չենք տեսել, որովհետև չեն էլ կարող լինել այդպիսի ծրագիրներ քաղաքային գործերում: Բայց մենք մի և նոյն ժամանակ չենք էլ տեսել իսկական կուսակցութիւններ, տարբեր ծրագիրներով ու աշխարհայեցողութիւններով, այլ աւելի շուտ եղել են լոկ ազգայնական դիմակով ծածկուած բուրժուական ակոբաթակներ, ստոր անափառութիւն, խմբակային համակրութիւններ ու հակակրութիւններ:

Ո՞րն է, ասացէք, այն լայն դեմօկրատիկական ծրագիրը, որից հրաժարուէին լաւագոյն մարդիկ, լինեն դրանք ծագումով ուսու, հայ թէ վրացի: Այսպիսի ծրագիրներով կուսակցութիւններ չը կան մեր քաղաքային գործերով հետաքրքրուողների մէջ: այդպիսի ծրագիրներ չեն արծարծուում և մամուլի մէջ, ուստի քաղաքի բնակիչների մեծամասնութեան շահերը շատ քիչ են ի նկատի առնուում:

160 հազարից աւելի բնակիչ ունեցող Թիֆլիսը մինչև այժմ պահպանում է միայն 17 սկզբնական դպրոց, մի արհեստաւորաց ուսումնարան, մի քաղաքային հիւանդանոց, մի հոգեկան հիւանդների ապաստարան, մի կանանց հիւանդանոց և անտուն-անտէր թշուառների համար գիշեր անցկացնելու 2 տուն... Ահա այն ամենը, ինչ որ արուած է չքաւոր քաղաքացիների համար: Այդ եղած հիմնարկութիւնների մէջ անշուշտ ոչ մի խտրութիւն չէ անուում հայի, վրացու կամ ուսի մէջ, և եթէ ընդհանրութեան մատչելի այդ հիմնարկութիւնների թիւը աւելացնուի, ոչ մի ազգութիւն չի արանջալ:

Այն էլ չը մոռանանք աւելացնել, որ եթէ Սօլօլակի ներկայացուցիչները մի առանձին քնքշութիւն ցոյց տուած լինէին դէպի Հաւլարարը և մոռացուած Վերան կամ X-րդ քաղաքամասը, դուցէ այն ժամանակ զօրիւնները իրաւունք ունենային ներկայ դումայի ձայնաւորներին մեղադրել ազգային տենդենցիա ունենալու մէջ: Բայց չէ որ մի այդպիսի բան ոչ ոք չի տեսել. ուրեմն ինչ միտք ունի դարձեալ ազգայնական հարց բարձրացնել, ինչպէս այդ արին վերջերումս, եբք պէտք է քննուէր՝ մի թէ երեք ժողովներում կատարել նոր ընտրութիւնները: Սկսեցին թուել, թէ ո՞ր քաղաքամասում ո՞րքան հայ տնատէր կայ, ո՞րքան վրացի կամ ուսու: Դրանով կարծես սրբադործում լինէին մի նախապաշարմունք, որ, ընդհակառակը, պիտի հիմնովին ոչնչացնէին: Դժուար է հասկանալ, թէ ինչ կապ ունի տնատէրի ծագումը քաղաքային բարեկարգութեան հետ: Դա անմիտ և վնասակար մի սովորութիւն է դարձել և պէտք է բնաւ չը

գործադրել քաղաքային ինքնավարութեան մէջ: Դա հին դաւերի խայտառակ մնացորդ է, որ գործիք է ճարպիկ ինտրիգանների ձեռքում:

Քաղաքացիներ, մի կողմ նետե՛ք՝ ձեր առողջ խելքը միջնացնող այդ թունաւոր ըմպելիքը, որ մատուցանում են ձեզ որոշ տիպի բուրժուա-ինտելիգենտները և խնդրին նայեցէք քաղաքի ազգաբնակութեան մեծամասնութեան շահերի տեսակէտից: Ո՛չ մի օրէնք չէ խանգարում ղեկավարուել հէնց այդ ուղղութեամբ, ուրիշն պէտք է աշխատել և ընտրութիւնների ժամանակ աջողեցնել յիշած նախապաշարմունքներից ազատ և ժողովրդի շահերին նուիրուած ձայնաւորներ ընտրել:

Այդ տեսակէտից եթէ նայելու լինենք հարցին, մեզ թւում է որ աւելի լաւ է ընտրութիւնները կատարել 3 ժողովներում, բայց քաղաքամասերը բաժանելիս բնաւ չը պէտք է ղեկավարուել տնտեսքների ազդութեան հարցով, այլ միայն տեղական պայմանների ընդհանուր յարմարութիւններով: Քաղաքի ծայրերում խառն ապրում են ամեն ազգութիւնից բնակիչներ և չէ կարելի մտածել մի բարեկարգութիւն, որից օգտուէր հայը և գրկուէր վրացին: Ուրիշն ինչ միտք ունի միամիտ մասսայի մէջ մտցնել այն շինծու խտրութիւնները, որ հնարել են զանազան ինտրիգաններ և գրչակներ:

Դժուար է համոզուել, որ աւելի նպատակայարմար է մի ժողովում կատարել ընտրութիւնները, մինչդեռ պարզ է, որ եթէ 3 քաղաքամասերում կատարուի ընտրութիւնը, այն ժամանակ քաղաքի խորհրդարանի մէջ համեմատաբար աւելի լիակատար կերպով կ'արտայայտուի ամբողջ քաղաքի ներկայացուցչութեան գաղափարը:

Եթէ բնակարանատէրերին ևս տրուէր ընտրութեան մասնակցելու իրաւունք *), այդ ներկայացուցչութիւնը անկասկած աւելի կատարեալ կը լինէր, սակայն ներկայ կանոններով անգամ արդարութեան պահանջին աւելի համապատասխան պէտք է համարել այն միջոցը, որով զանազան քաղաքամասերը (և ոչ ազգութիւնները) հնարաւորութիւն են ստանում ունենալ իրանց ներկայացուցիչները դումայում:

Ցաւալին այն է, որ փոխանակ մոռացնել տալու և ջրելու ազգային նախապաշարմունքը, տեղական մամուլը դեռ շարունակում է քրքրել ու հաշիւներ անել, թէ այս կամ այն քաղաքամասում ո՞ր ազգութիւնից քանի տնտէր կայ: Այդ մի հրէշաւոր և մլասակար հայեացք է: Եթէ, դիցուք, X-րդ քաղաքամաս-

*) Համեմատիր № 1 ներքին Տեսութիւնը:

սում 1056 տնատէրերից 400 ուսու է, իսկ 281 հայ, 264 վրացի և 94-ը գերմանացի, միթէ դրանից պէտք է հետեցնել, որ անպատշաճ պիտի ընտրել ուսու ձայնաւոր և ոչ գերմանացի, եթէ այդ վերջինը աւելի շիտակ, աւելի եռանդոտ և ընդունակ անձ է և աւելի յարմար է ձայնաւորի պարտականութիւններէ համար: Կամ եթէ Սօլալում 407 տնատէրերի մէջ 45 վրացի է, 33 ուսու, իսկ 328 հայ—միթէ դրանից հետեւում է, որ ընտրութիւնների ժամանակ անպատշաճ պիտի մետրիկականի հարց առաջ գայ... Այլ, վերջապէս, ինչ օգուտ «Հայութեան» համար, եթէ նոյն իսկ Հայաստանեայց եկեղեցու հաւատարիմ մի զաւակ ընտրուի Թիֆլիսի քաղաքային խորհրդի ձայնաւոր և ոչ՝ մի շիտակ ուսու կամ վրացի:

Մի տարօրինակ մոլորութիւն է հէնց անպատշաճ ծագման հարց յարուցանել նոյն իսկ այնտեղ, ուր բնաւ նա տեղի չը պիտի ունենայ: Դրէք համոզմունքների, աշխարհայեցողութեան, սնտեսական ծրագրների հարց—այդ մենք հասկանում ենք, իսկ ազգայնական ոչ մի շահի հետ կապուած չէ քաղաքի ընդհանուր բարեկարգութեան հարցը: Դասակարգերի հարց քաղաքում մենք ընդունում ենք, իսկ ազգայնական—ոչ:

Եթէ մէկը պաշտպանի այն միտքը, որ ձիաքաշը, լուսաւորութիւնը, հեռախօսը, և այլն, մասնաւոր կապիտալիստների ձեռքից պէտք է խլել և կենտրոնացնել քաղաքի ձեռքում, եթէ մէկը առաջարկի, որ քաղաքը չինի արժան բնակարաններ չը քաւոր ընտանիքների համար, եթէ մէկը ցանկանայ, որ աւելի մեծ ուշք դարձնուի չքաւոր դասակարգերի յարմարութիւնների մասին և այլն և այլն, իսկ միւսը բոլորովին հակառակ հայեացքներ պաշտպանի—այդ դէպքում մենք հասկանում ենք կուսակցութիւն իսօսը, որովհետեւ այդտեղ ծրագրի, աշխարհայեցողութեան հարց կայ. իսկ թէ ոչ, ինչ, բայց տխմար սնտիստութիւն կամ գրգռուած փոքրժառկ կարելի է գտնել այն բոլոր վայնասունների մէջ, որ բարձրացնում են յանուն «ազգայնութեան»:

Անշուշտ քաղաքային ինքնավարութիւնների բիւրոգէտի վրայ այնքան ծանրացած են զանազան պարտադիր ծախքեր, որ միջոցների սղութիւնը արգելք է դնում ընդարձակ ծրագրիների իրագործման, բայց, այնու ամենայնիւ, եթէ սրտազին և գիտակցական վերաբերմունք լինի դէպի դեմօկրատիկական բարենորոգումները՝ շատ աւելի բան կարելի էր անել, քան անում է: Այդ գիտակցական հոսանքը անհետանք չէր մնալ և հասարակութեան համար, որի մէջ կը գտնուէին հանդուցեալ Զուբալովի ժառանգների պէս միլիօնատէրեր: Միթէ պատահա-

կան բան է, որ դրանք հէնց ժողովրդական տան համար նուիրել են 100 հազար և ոչ թէ մի եկեղեցու շինութեան կամ այլ նպատակի համար: Եթէ ժողովրդական տան մասին վերջին տարիների ընթացքում այնքան չը խօսուէր, չը գրուէր, անկասկած չէր էլ լինիլ հասարակութեան մէջ դրանց անհրաժեշտութեան մասին որ և է հասկացողութիւն:

Թող թէ մամուլը և թէ քաղաքային ինքնավարութիւնը միշտ չեշտեն այդ ընդհանուր կարիքների մասին, արծարծեն, քննեն մասսայի բարօրութեան վերաբերեալ հարցեր և մի կողմ թողնեն ազգայնական հարցը և հաւանական է որ մեր մէջ ևս առաջ կը դան ժամանակով այնպիսի միլիոնատէրեր, որոնք ամերիկացի միլիոնատէր Անդրիւ Կարնիգի նման բացականչեն. «Մեռնել հարուստ—նշանակում է մեռնել անպատուած»:

Եթէ Կարնիգին 30 միլիոն դոլար է նուիրում գրադարաններ բանալու համար և 22 միլիոն մի պօլիտեխնիկումի վրայ, մեր միլիոնատէրերն էլ կը սովորեն գէթ տանեալ հազարներ նուիրել, եթէ ըմբռնեն, թէ որքան այդ աւելի նպատակայարմար է, քան փուշ որդկերանց զեղխութեան համար թողնել իրանց անբաւ հարստութիւնները...

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Լուսաւորութեան միջիտար Ն. Բօզօլէպօվի մահից յետոյ Բարձրագոյն հրովարտակով լուսաւորութեան միջիտար է նշանակուած գեներալ-ադիւտանտ Վանօվսկին, որ ծնուել է 1822 թուին և 1881—1898 թիւը վարել է զինուորական միջիտարի պաշտօն, իսկ 1899 թուին նրան Բարձրագոյն հրամայուած էր բազմակողմանի քննութեան ենթարկել ուսանողական խառնակութիւնների պատճառներն ու հանգամանքները: Առաջ ենք բերում թէ Բարձրագոյն հրովարտակը, թէ նոր միջիտարի հրամանը և թէ վերջին կառավարչական հաղորդագրութիւնը՝ բարձրագոյն գալրոյներում ուսումնական կեանքի կանոնաւոր ընթացքը վերականգնելու մասին:

Բարձրագոյն հրովարտակ գեներալ-ադիւտանտ Վանօվսկուն.

«Պետք Սեմեօնօվիչ ժողովրդական լուսաւորութեան կանոնաւոր կազմակերպութիւնը միշտ եղել է Ռուսաց Թաղաւորների գլխաւոր հոգսերից մէկը, որոնք հաստատուն կերպով, բայց աստիճանաբար ձգտել են կատարելագործել այդ կազմակերպութիւնը ուսաց կեանքի հիմնական սկզբունքների և ժա-

մանակի պահանջների համաձայն՝ Վերջին տարիների փորձը ցոյց տուեց, սակայն, մեր ուսումնարանական կազմակերպութեան մէջ այն աստիճան էական թերութիւններ, որ ես բարեպատեհ համարեցի ձեռնամուխ լինել արմատապէս քննելու և բարւոյեցնելու այդ կազմակերպութիւնը: Բարձր գնահատելով ձեր պետական փորձառութիւնը և լուսաւոր միտքը, ես ձեզ ինձ աշխատակից ընտրեցի՝ ուսաց դպրոցի վերանորոգման և վերակազմութեան գործի համար, և կոչում եմ ձեզ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի՝ այժմ առանձնապէս կարևոր պաշտօնին, հաստատ հաստացած լինելով, որ դուք խստիւ և անշեղ կեդուով կը դիմէք իմ որոշած նպատակին և ուսւ պատանիների կրթութեան գործի մէջ կը մտցնէք ձեր փորձառութեամբ խմած անցած խելքը և որտապին հոգատարութիւն ուսւ պատանիների մասին: Թող օրհնէ Աստուած Մեր աշխատանքները, թող օգնեն Մեզ այդ աշխատանքների մէջ ծնողները և ընտանիքները, որոնք աւելի մօտից պարտաւոր են հոգալ իրանց զաւակների մասին, և այնուհետև շուտով կը հասնի այն ժամանակը, երբ ես և ինձ հետ ամբողջ ժողովուրդը պարծանքով և սրտի մխիթարութեամբ կը նայենք երիտասարդ սերնդի վրայ, իբրև հայրենիքի հաստատու անվրէպ յոյսի վրայ, և կը համարենք նրան հայրենիքի տուկուն նեցուկը ապագայում:» Իսկականի վրայ գրուած է՝

«Ձ ե գ ա ն կ ե դ ծ յ ա ր գ ո ղ Ն ի կ օ լ ա յ»:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի հրամանը.

«Թագաւոր Կայսրի Բարձրագոյն կամքով ես կոչուած եմ վարելու ժողովրդական լուսաւորութեան՝ այժմ առանձնապէս կարևոր նշանակութիւն ունեցող պաշտօնը: Ես կը գործադրեմ իմ հասկացողութեան բոլոր ոյժերը արդարացնելու համար Միապետի բարձր վստահութիւնը և կատարելու Բարձրագոյն ինձ վրայ դրած յանձնարարութիւնը: Բարձրագոյն հրովարտակի մէջ, որին Նորին Կայսերական Մեծութիւնը հաճել էր արժանացնել ինձ այս տարուայ մարտի 25-ին, համառօտապէս ցոյց է տուած իմ առաջիկայ գործունէութեան ամբողջ ծրագիրը, ինչպէս, օրինակ՝ մեր ուսումնական մասի կազմակերպութեան հիմնական վերաքննութիւնը և ուղղումը, մեր ուսական ուսումնարանի վերանորոգումն և կարգաւորութիւնը և ուսւ երիտասարդութեան կրթութեան գործի մէջ խելացիութիւն և սրտազին հոգատարութիւն մտցնելը: Այս Բարձրագոյն նախադրուած ծրագրի ճիշտ և անշեղ կատարումը պէտք է համարուի ինձ ենթարկուած հաստատութիւնների համար սրբազան պարտաւորութիւն, մի և նոյն ժամանակ ծրագրի առաջին, ամենակարևոր մասը, ուսումնական

կազմակերպութեան բարենորոգութիւնը, որին, ի կատարումն Բարձրագոյն կամքի, պէտք է ձեռնամուխ լինել առանց յետաձգութեան, յամենայն դէպս կը պահանջէ որոշ ժամանակ ամբողջովին իրագործելու համար. երկրորդ, նրա ոչ նուազ նշանաւոր մասը—երիտասարդութեան կրթութեան գործի մէջ խնայցիութիւն, սէր և սրտագին հոգատարութիւն մտցնելը—մշտապէս կզել է ուսումնական կազմի մերձաւոր կատարելքը, որ և գործադրել է այն աւելի և կամ պակաս աջողութեամբ: Այսուհետեւ այդ բանը դրոււմ է նրա վրայ, որպէս առաջին, անշեղ գործադրելի և անհրաժեշտ պարտաւորութիւն: Յուսարով, որ իմ մերձաւոր աշխատակիցներս և այժմ ինձ յանձնուած միջնորդութեան մէջ բոլոր ծառայողները, ցոյց կը տան ինձ լիակատար աջակցութիւն՝ Բարձրագոյն ինձ վրայ դրած յանձնարարութիւնը կատարելու համար, ևս հրաւիրում եմ նրանց զէպի միաբան, միասիրտ և անխնջ աշխատանք Բարձրագոյն ցոյց տուած ծրագրի իրագործման հարցում: Ես հրաւիրում եմ ուսուցչական կազմին մերձաւոր շփման մէջ մտնել ուսանող երիտասարդութեան հետ, և անկախ դասատուութիւնից, նպաստել երիտասարդութեան դաստիարակութեան՝ սիրոյ և սրտագին հոգացողութեան յարաբերութեան վրայ հիմնուած: Ես հրաւիրում եմ ուսանողների ծնողներին և ընտանիքներին, ընտանեկան ազդեցութիւն գործ դնելով իրանց որդոց վրայ, օգնել ինձ յանձնուած միջնորդութեան՝ իրագործելու երիտասարդ սերնդի դաստիարակութեան մեծ գործը, միշտ յիշելով, որ դաստիարակութեան հիմքը ընտանիքի մէջ է և նրա առաջադիմութիւնը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ ընտանիքը և զպրօքը փոխադարձաբար աջակցում են միմեանց և շփուում են միմեանց հետ: Ես հրաւիրում եմ ուսանող երիտասարդութիւնը փտահոլութեամբ վերաբերուել կառավարութեան ձեռնարկած միջոցներին, հաւատալ, թէ անդադար հողացոււմ է նրա մասին, յիշել իր պարտքը, կատարել իր պարտաւորութիւնները և, հանգիստ պարապելով զիտութիւնների ուսումնասիրութեամբ, տալ մեզ հնարաւորութիւն նուիրելու մեր ժամանակը և ոյժերը ուսական զպրօքը և ուսումնական գործը կարգաւորելուն: Ես խորապէս համոզուած եմ և սրբութեամբ հաւատում եմ, որ սրտագին միութեամբ և փոխադարձ աջակցութեամբ մենք, Աստուծոյ օգնութեամբ, մօտիկ ապագայում հնարաւորութիւն կ'ունենանք կատարելու սիրեցեալ Միապետի ցանկութիւնը—տեսնել ուսու երիտասարդութեան մէջ հայրենիքի հաստատուն և հաւատարիմ յոյսը և նրա ամուր նեցուկը ապագայում:

Կառավարչական հաղորդագրութիւն բարձրագոյն դրպ- րոցների վերաբերեալ

Սկսած անցեալ յունուար ամսի երկրորդ կէսից զանազան վարչութիւնների իրաւասութեան տակ գտնուող բարձրագոյն դպրոցների մեծամասնութեան մէջ տեղի ունեցան զանազան ժամանակներում ուսանողական անկարգութիւններ, որոնց հետեանքը եղաւ ուսումնական պարապմունքների դադարեցումը այդ դպրոցներում—դատական տօներէից առաջ: Պարապմունքների այս դադարեցումը, որ արգելք հանդիսացաւ նրանց սովորական լրմանը, ստեղծեց այնպիսի դրութիւն, որի պատճառով ուսանողները հարկադրուած պէտք է լինեն կամ կորցնել մի ուսումնական տարի, կամ մինչև անգամ մի քանի դէպքերում, չնորհիւ այժմ գործող կանոնների, թողնել դպրոցը: Այսպիսի հետեւանքները պէտք է ծանր ազդեցութիւն գործեն ուսանողների վիճակի վրայ, իսկ նրանցից չատերի համար, նրանց սնձնական և ընտանեկան դրութեան պատճառով, դա մի իսկական դժբախտութիւն կը լինի: Բարձրագոյն բարեհաճութեամբ և ժողովրդական լուսաւորութեան միջնորդի նախագահութեամբ կազմուած խորհրդակցութիւնը այն միջնորդութիւնների ներկայացուցիչներից, որոնց վարչութեան տակ կան բարձրագոյն դպրոցներ, անհրաժեշտ համարեց, յիշեալ դպրոցներում ուսումնական կեանքի կանոնաւոր ընթացքը վերականգնելու համար, ձեռք առնել հետեւեալ միջոցները.

1) Ապրիլ ամսի ընթացքում բարձրագոյն դպրոցներում վերսկսել ուսումնական պարապմունքները կամ թէ, ուսումնական վարչութեան կարգադրութեամբ, անմիջապէս ձեռնամուխ լինել կուրսից կուրս անցնելու և վերջնական քննութիւնների կատարման այն ժամանակամիջոցներում, որոնք սովորաբար ընդունուած են քննութիւնների ցուցակներով:

2) Եթէ ուսումնական պարապմունքները վերջացնելու և քննութիւններ կատարելու համար քիչ ժամանակ մնայ մինչև ամառային արձակուրդների սկիզբը, այն ժամանակ ուսումնական պարապմունքները և քննութիւնները շարունակել և արձակուրդին յատկացրած ժամանակամիջոցում, թողնելով վարչութիւնների կամքին այս բանի համար միջոցներ որոշելու հարցը:

3) Առանց յարգելի պատճառների քննութիւններին չեկողներին և քննութիւն չը բռնողներին ենթարկել այն բոլոր հետեւանքներին, որոնք ցոյց են տուած այս խնդրի վերաբերմամբ առանձին վարչութիւնների մէջ գործող կանոններով:

4) Բարձրագոյն դպրոցներում, որպէս բացառութիւն, նշա-
նակել այս տարուայ ընթացքում աշնանային քննութիւններ և վե-
րաքննութիւններ յարգելի դէպքերում առանձին անձանց համար,
համաձայն վերջիններիս խնդիրների և կարգադրութեան ու-
սումնական վարչութիւնների: